ԴՐԱՔԱՐԻ ԴԱՐՁՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԶՆՎԱՀԱՆԱԿԱՆ-ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՏԻՊԵՐՆ ԸՍՏ ՂԵՎՈՆԴ ՎԱՐԴԱՊԵՏԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԵՐԿԻ

Լ. Լ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ղևոնդ Վարդապետը (Ղևոնդ Պատմիչ, Ղևոնդ Մեծ) VIII դ. հեղինակ է։ Նրա «Պատմութիւն» («Ժամանակագրութիւն») երկի լեզուն իր ժամանակի գրաբարն է, որ ապրելով լեզվի կառուցվածքային տարրերի բանակական-որակական փոփոխությունների գործընթաց՝ անկասկած տարբերվում է V դ. թե՛ դասական և թե՛ հետդասական հայերենից[1]։

VIII դ. լեզվավիճակի վերաբերյալ որոշակի պատկերացում կարող են տալ նաև վերախմբագրված կայուն բառակապակցությունները՝ դարձվածային միավորները (ԴՄ), որոնք փոխանցվելով լեզվի մի զոյավիճակից մյուսը՝ վերհանում են տարժամանակյա իմաստային-կառուցվածքային յուրահատկություններ։

Թեև մեզանում դարձվածքներին նվիրված բավական լուրջ ուսումնասիրություններ կան, որոնք դրեթե ամբողջացնում են այդ մարզի գիտական նկարագրությունը[2], այնուամենայնիվ հին հայերենի դարձվածանին առանձին քննության չի արժանացել[3]։

Պատմական իմաստաբանության այդ բացը հանդամանալից քննության կարիք է դրդում, մանավանդ եթե նկատի ունենանք դրաբարի դարձվածքների այն հարուստ պաշարը, որ սփռված է «Նոր բառգիրք Հայկազեան լեզուի» (Հ. Ա.Բ, Վենետիկ, 1836—1837) և «Առձեռն բառարան» (Վենետիկ, 1865) բառարանագրական հուշարձաններում, ինչպես նաև դրաբարալեզու հեղինակների ժատյաններում ու դրանց համարբառներում։

Սույն հոդվածի շրջանակներում կփորձենք բնութագրել VIII դ. հայերենի կայուն բառակապակցությունների իմաստային-ձևաբանական կառուցվածքը՝ քննության նյութ ունենալով Ղևոնդ Վարդապետի «Պատմութիւն» երկի դարձվածանին։

Չխորանալով ԴՄ-ների դասակարգման ամենատարբեր եղանակների մեջ՝ նպատակահարմար ենք գտնում խնդրո առարկա կառույցները բնել ըստ դոմինանտ (առանցքային) բաղադրիչի սրատեսության և ըստ ձևաբանական-կառուցվածքային տիպերի։

I. Դոմինանտ բառը ԴՄ-ներում

Դարձվածքը կայուն, պատրաստի վերարտադրելի, վերախմբագրված կապակցություն է։ Նրա բաղադրիչների իմաստային միաձուլությունն իշխում է կապակցության կառուցվածքային անմիատարրության վրա, որի հետևանքով նախադասության մեջ այն գործառապես համարժեք է դառ-

---

1 Ղևոնդ Վարդապետի Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1887։

2 Ե. Գևորգյան, Հայերենի դարձվածքները, Ե., 1969, Ա. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Ե., 1971 (էջ 134—286), Պ. Բեդիրյան, Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Ե., 1973, Խ. Բաղիկյան, Ժամանակակից հայերենի դարձվածային միավորները, Ե., 1986։

3 Դրաբարի դարձվածքների քննությանը մասամբ անդրադարձել են Պ. Բեդիրյանը՝ նշվ. աշխ., էջ 216—219 և այլուր, և Վ. Առաքելյանը՝ «Ակնարկներ հայոց դրական լեզվի պատմության» մենագրության շրջանակներում (Ե., 1981)։

նում բառին[4]։ Դարձվածքն սկսվում է այնտեղ, որ վերջանում է բաղադրիչների իմաստային իրացումը[5]։

Դարձվածային իմաստ արտահայտելու համար շարահյուսական տվյալ կառույցը պետք է ունենա վերաիմաստավորված բաղադրիչ(ներ)։ Սակայն այդ դեպքում կառույցի բոլոր բաղադրիչների վերաիմաստավորում պարտադիր չէ։ Եթե ԴՄ-ի մեկ բաղադրիչն է հանդես եկել վերաիմաստավորված-դարձվածային նշանակությամբ (միաբևեռ ԴՄ), երկուսը (երկբևեռ ԴՄ), երեքը (եռաբևեռ ԴՄ) և այլն, ապա նման կառույցների մնացած բաղադրիչները պահպանում են իմաստային ինքնուրույնություն և հակադրվում են վերաիմաստավորված դարձվածային բաղադրիչ(ներ)ին[6]։

ԴՄ-ների իմաստային կառուցվածքի մեջ վերաիմաստավորված բաղադրիչը սովորաբար համարվում է դոմինանտ անդամ, որը, ինչպես նշվեց, կապակցության դարձվածային իմաստի հիմնական կրողն է դառնում։

Դոմինանտ բաղադրիչը, փաստորեն, դարձվածային նշանակությամբ օժտված անդամն է, որով պայմանավորվում է կայուն բառակապակցության ամբողջական վերաիմաստավորման գործընթացը։

ԴՄ-ների կառուցվածքային պլանում իմաստային ինքնուրույնություն ունեցող անդամները թեև վերաիմաստավորված չեն, այնուամենայնիվ առանց այդ բառերի դարձվածքները չեն կարող ամբողջական լինել։

Գրաբարյան ԴՄ-ներում, իբրև դոմինանտ բաղադրիչներ, ամենից հաճախ հանդես են գալիս մարդու մարմնի մասերի անվանումները, ինչպես նաև բառապաշարային ընդհանուր թեմատիկ խումբ չկազմող այլ բառեր (գինի, մահ, սուր, ատոն, բան և այլն)։

Հմմտ. Ձեռն — ընդ ձեռամբ (նուաճել), տամ||մատնեմ ի ձեռս, անկանիմ ի ձեռս, հանեմ ի ձեռաց, ի ձեռացն եղև, ծանրանայ ձեռն (ի վերայ...), խնդրեմ արիւն ի ձեռաց քոց, ի ձեռին (իմ) է, ապրել ի ձեռաց (նորա), դնեմ զոգի ի ձեռին, համբառնամ զձեռս ի վեր...,

Ակն||աչք — ընդ ակամբ հայիմ, ակն ունիմ, աչաւք (մեր) տեսանել կարեմք, յաչս (մարդկան) մեռան, ի բարձունս կարկառեմ զաչս, մի տեսցեն աչք մեր...,

Ականջ||ունկն — հասանել յականջս, զոր ակն ոչ ետես և ունկն ոչ լուաւ,

Թիկունք — հասանել||առնուլ||կոչել||գալ ի թիկունս (աւգնականութեան), զթիկունս (իմ) տամ ի հարուածս...,

Ոտն — կոխան ոտիցն լինիմ, առ ոտն կոխեմ, դնեմ պատուանդան ոտից քոց...,

Սիրտ — լքաւ սիրտ, մտանէ ի սիրտս, դողալ սիրտ, կարծրանայ սիրտ, դարձուցել զսիրտ, խստանայ սիրտ, անկաւ ի սիրտ, շարժել սիրտ...,

Գլուխ — շարժելին զգլուխս, ի գլուխ ելանեմ, դարձցի ի գլուխ (քո), ի գլուխ տանեմ, համբառնամ զգլուխ, բառնամ զգլուխս...։

Ինչպես ցույց է տալիս ԴՄ-ների իմաստային-ձևաբանական կառուցվածքի քննությունը, կառույցի դոմինանտ բաղադրիչի և ամբողջական կապակցության ձևաբանական արժեքները կարող են թե՛ համապատասխանել և թե՛ ոչ։

Այսպես, վերոբերյալ ԴՄ-ների դոմինանտ բաղադրիչները գոյականներ են, մինչդեռ ամբողջական կապակցություններն ունեն բացառապես բայի արժեք։

---

[4] О. Ахманова, Словарь лингвистических терминов, М., 1969, с. 503—504.
[5] В. Жуков, Семантика фразеологических оборотов, М., 1978, с. 6.
[6] Հմմտ. Լ. Խաչատրյան, Խոսքիմասային տարանջատումն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996, էջ 63։

Հմմտ. Գումարէր զաւրս բազումս և տայր ի ձեռս զաւրավարին Մսլի-
մայ (40)։ Հաստատուն պահէր զերդումն գրոյն... միայն ընդ ակամբ հայէր նախարարացն Հայոց (31)։ Հասանէր զժտութիւն նոցա յականջս որգւոյն Մահմետի (112)։ Եւ յայնմհետէ լինի սիրտ արքային Յունաց (15)։ Եւ իբրև այս չարիք ի գլուխ ելանէին՝ զարձեալ հաստատէ զիշխանութիւնն Աշոտոյ Մրուան (21)։

Նմանապես՝ սրտի մտաւ և Իրտամբ երեսաց ԴՄ-ները թեև ունեն մակբայի արժեք, այնուամենայնիվ նրանց առանցքային բաղադրիչները գոյականներ են։

Համտ. Սուրբքն մատուցանէին սրտի մտաւ միայնոյ մաքրագունին (21)։ «Իրտամբ երեսաց քոց կերիցես զհաց քո» (79)։

Ղևոնդ Վարդապետի երկում կան մի շարք ԴՄ-ներ էլ, որոնց ձևաբանական արժեքները համապատասխանում են կառույցի առանցքային բաղադրիչի խոսքիմասային նշանակությանը։

Համտ. Քրիստոսի հաւտ—հաւտ (գոյ.), ծառայ Աստուծոյ—ծառայ (գոյ.), որդի յանցանաց—որդի (գոյ.) և այլն։

Համտ. Ոչ շատացաւ ունել զմարմինս ընտրելոց Քրիստոսի հաւտիս (135)։ Սառայս և սիրելիս Աստուծոյ Մահմետն քոյ խոստովանել ուսուցանէ ձեզ (51)։

II. ԴՄ-ների ձևաբանական արժեքը

ԴՄ-ները շարահյուսական առանձնահատուկ կառույցներ են, որոնք լեզվական տարբեր մակարդակներում բնութագրվում են կապակցականքերականական մի շարք հատկանիշներով։

Խոսքիմասային մակարդակում ԴՄ-ները հարաբերակից են բառերին և մեծ մասամբ արտահայտում են մեկ հասկացություն։

Այդ կառույցները, իբրև հասկացության անվանումներ, բնութագրվում են ձևաբանական արժեքով (խոսքիմասային նշանակությամբ)՝ յացառությամբ նախադասության ձևավորում և արժեք ունեցողների։

Շարահյուսականում ԴՄ-ներն ունեն որոշակի գործառույթ, որ իրացվում է տվյալ կառույցին հատուկ քերականական կարգերի միջոցով։

Դարձվածաբանական մակարդակում ԴՄ-ները բնութագրվում են բաղադրիչներից մեկի կամ մի քանիսի փոխաբերական-դարձվածային իմաստով՝ ներկայանալով իբրև վերաիմաստավորված կայուն բառակապակցություններ։

ԴՄ-ների ձևաբանական արժեքը որոշվում է ամբողջական կառույցի հասկացության իմաստով ու նրա գործառական հատկանիշներով[7]։

Եթե ԴՄ-ներն ունեն այս կամ այն խոսքիմասային նշանակություններ, ապա պետք է բավարարեն տվյալ խոսքի մասին ներկայացվող քերականական չափանիշներ (պետք է հանդես գան տվյալ ձևաբանական միավորին հատուկ հարացուցային ձևերով, իսկ շարահյուսականում՝ համապատասխան գործառույթով)։

Դարձվածաբանական գրականության մեջ առանձնացնում են գոյականական, ածականական, մակբայական, բայական, նաև եղանակավորող դարձվածքներ[8]։

Ղևոնդ Վարդապետի դարձվածային բավական բազմազան է. նա գործածել է ԴՄ-ների գրեթե բոլոր տեսակները՝ ընդ որում խիստ տարբեր հաճախականությամբ։

---

7 Տե՛ս Պ. Բեդիրյան, նշվ. աշխ., էջ 128—134, Խ. Բադիկյան, նշվ. աշխ., էջ 92։

8 Ն. Մ. Շանսկին, ի թիվս այս խմբերի, ընդունում է նաև այսպես կոչված ձայնարկական և շաղկապային դարձվածքներ (Н. М. Шанский, Фразеология современного русского языка, М., 1969, с. 63).

Ա. Գոյականական ԴՄ-ներ: Գոյականական ԴՄ-ները, ինչպես գոյականներն ընդհանրապես, անվանում են հասկացություններ և ունեն անվանողական արժեք։

Արտահայտության պլանում սրանք մեծ մասամբ գոյական+գոյական կառուցներ են, որոնց լրացումները դրված են լինում ուղիղ ձևով, իսկ լրացումը հիմնականում հանդես է գալիս սեռական հոլովով, ինչպես՝

Քրիստոսի հատ, դաոն Աստուծոյ, ծառայ Աստուծոյ, անաւթ պատերազմի, որդի յանցանաց, հեղումն արեան և այլն։

Հմմտ. Եւ ամենայն ուղիղ յանցանաց երթեալը խառնեցին ի ռունդ աստամբութեանն (123)։ Եւ դայս ամենայն չարիս և ենդիմունս արեանց կատարեալ ամս .Զ.՝ վախճանի (127)։

Որոշ դեպքերում գոյականական ԴՄ-ները ներկայացնում են գոյական+ածական կառուցներ, ինչպես՝

երկնաւոր թագաւոր, յաւիտենական մահ, հանդերձեալ աշխարհ, արքայութիւն երկնային, դիրք աստուածային, աթոռ հայրապետութեան[9] և այլն։

Հմմտ. Եւ անուն կոչեցաւ նմա հրեշտակ մեծի խորհրդոյ, Աստուած հզաւր... հայր հանգերձելոյ աշխարհի (73)։ Ո՞չ է երկնաւոր թագաւորի որդի Քրիստոս (72)։

Այս կարգի ԴՄ-ների կողքին հանդիպում են նաև գոյականական կայուն բառակապակցություններ, որոնք VIII դ. մակարդակում ընկալվում են իբրև շրջասություններ (հասկացությունն անվանելու փոխարեն մատնանշվում է նրա հիմնական հատկանիշը)։ Դրանք ձևավորվել են սուն ընդհանուր բաղադրիչով և, այսպես ասած, բռնել են ԴՄ-ներն անցնելու ուղին, ինչպես՝

տուն Աստուծոյ, տուն տղաւթից և այլն[10]։

Հմմտ. Եւ չիննայ նա սուն սղաւրից ի դաւառն Արաղածոտին (15)։ Շինեցաւ յերկոսն սուն Աստուծոյ... (105)։

Բ. Ածականական ԴՄ-ներ: Սրանք հարաբերակից են ածականներին, ունեն առարկայի հատկանիշի անվանողական արժեք։

Ղևոնդ Վարդապետի երկում հանդիպում են հետևյալ ածականական ԴՄ-ները, որոնք ներկայացնում են գոյական+դերբայ (որոմն սերմանող) և ածական+գոյական (քարեղէն երես) կառուցվածքային տիպերը։

Հմմտ. Զի պատուէր աւրինադրին իւրեանց ունին աժանդակ, զոր պատուիրեացն որոմանցն սերմանողի (4)։ Թէ արդարև մարմնեղէն և ոչ քարեղէն ունիցիս երեսս՝ ամաչեա ընդ այսչան ստութեանդ (77)[11]։

Գ. Մակբայական ԴՄ-ներ: Մակբայի արժեքով ԴՄ-ները դասվում են ործողության հատկանիշ անվանողների տեսակին։ Եթե գոյականական ԴՄ-ների արտահայտության պլանում լրացյալը պարտադիր գոյական է, իսկ բայական ԴՄ-ների պարագային՝ բայ, ապա մակբայական ԴՄ-ների համար մակբայ բաղադրիչի առկայությունը պարտադիր չէ։

Քննարկվող բնագրում մակբայական ԴՄ-ները ունեն գոյական+գոյական (սրտի մտաւթ, բրտամբք երեսաց, անձամբ անձին), գոյական+դերանուն (անձամբ իմով, ձեռամբ իմով) կառուցվածքային տիպերը։

---

9 Աթոռ հայրապետութեան ԴՄ-ի իմաստային կառուցվածքում հայրապետութեան բաղադրիչը ևս ունի ածականի արժեք. այստեղ տոկա է մեռացականը թանձրացականի փոխարեն ոչական ձևերը. հայրապետութեան||հայրապետի||հայրապետական։

10 Այս եարդի կառուցները «անանպարտ» էին ընկալ դեռևս V դարից. Հմմտ. տուն Քրիստոսի. տուն լուսաւորչի. տուն ապօրիդ (Փ. Բուզանդ)։

11 Ունիմ բաի հառաջադրյամբ այն կարող է մեկնաբանվել իբրև բայական ԴՄ քարեղէն ունիմ երեսս։ Հմմտ. ախտաղարար. պիղծ երես և պիղծ երես ունենալ։

Ինչպես նկատելի է, մակբայական ԴՄ-ների առանցքային անդամը՝ գոյականը, արտահայտված է գործիական հոլովով, որ պայմանավորված է վերջինիս հատուկ պարագայական գործառույթով։

Դ. Բայական ԴՄ-ներ: *Այս կարգի ԴՄ-ների իմաստային կառուցվածքում պարտադիր է բայական անդամի առկայությունը։*

Գրաբարի բայական ԴՄ-ներն օժտված են կառուցվածքային բազմազան տիպերով, որոնք հմտորեն օգտագործել է Ղևոնդ Վարդապետը՝ իր խոսքն առավել պատկերավոր ու արտահայտիչ դարձնելու նպատակով։

Նպատակահարմար է այդ կառույցները քննել երկու՝ անվանաբայական և նախդրավոր տիպերով։

1) Անվանաբայական կապակցությունները բայ + գոյական *կառույցներ են, որոնց գոյական բաղադրիչը հանդես է գալիս ուղղական և հայցական հոլովներով։*

Եթե գոյականը կապակցություն է կազմում ուղղական հոլովով, *ապա բայական անդամը հանդես է գալիս միայն եղանակային ձևերով, ինչպես՝ դրդի սիրտ, խստանայ սիրտ, կարծրանայ սիրտ, շարժի սիրտ, ծանրանայ ձեռն։*

Հմմտ. Յայնու ժամանակաւ դարձեալ գրգռէր սիրտ *դաւաճանին Մահմետի ի վերայ աշխարհին Հենաց (37)։ Եւ յայնմհետէ առաւել* ծանրացաւ ձեռն *նորա ի վերայ աշխարհիս Հայոց (101)։*

Անվանաբայական կապակցություններում խիստ ակտիվ է գոյականի հայցական *հոլովը, իսկ որպես բայական բաղադրիչներ կենսունակ են* առնեմ, առնում, մատուցանեմ, խնդրեմ, հեղում, հարկանեմ *և այլ բայեր, ինչպես՝*

առնեմ—*առնեմ զկոխումն, առնեմ սիրտ,* առնում—*առնում մարմին, առնում աւար,* մատուցանեմ-*զգուշութիւն մատուցանեմ, գոհութիւն մատուցանեմ,* խնդրեմ—*արիւն խնդրեմ,* հեղում—*հեղում զարիւն,* հարկանեմ—*բուռն հարկանեմ և այլն։*

Հմմտ. Միշտ հրամայէ մեզ առնել զկոխումն *մահու (47)։ Զորս ի ձեռն մարգարէիցն խաւսեցաւ նախ քան* զառնուլն մարմին *(58)։ Քանզի պարապաւ էր ամրացեալ, և ոչինչ նուազ* զգուշութիւն մատուցանէին *շուրջն (157)։ Ոչ ածեր զմտաւ երբէք, եթէ զորս խողխողեաց սուր քո, և կամ գերեցան յերկրէս իմմէ՝* խնդրի արիւն *նոցա ի ձեռաց քոց (108)։*

2) Նախդրավոր կառույցներ: *Գրաբարի դարձվածքների կառուցվածքային առանձնահատկությունն այն է, որ նրանց արտահայտության պլանում նախդիրներն առանձնակի դեր ու կշիռ ունեն։ Միաժամանակ, եթե նախդիրները համարենք դարձվածակազմիչ ձևույթներ, ապա նման ԴՄ-ները կդիտվեն իբրև առնվազն եռանդամ կառույցներ (բացառությամբ այն դեպքերի, երբ նախդիրը գրվում է տվյալ հոլովաձևին կից՝* զ, ի>յ):

VIII դարի բայական ԴՄ-ների կառուցվածքային պլանում մեծ հաճախականություն ունեն ի, ընդ, զ *նախդիրները։*

Ի—*առնում ի գերութիւն, անցուցանեմ ի համարոյ, ի դիտութիւն հասանէ, ի գլուխ ելանեմ, ի խառնակումն գամ, ի խնդիր ելանեմ, ի կործիս անկանիմ, ի սուր մաշեմ, ի փախուստ դառնամ, հասանէ յականջս, առնում յաւարի, յանձին ունիմ, յաւեր դարձուցանեմ, յաշխարհէս փոխիմ, անկանիմ ի ձեռն||ի ձեռս։*

Ընդ—*արկանեմ ընդ կապանաւք, արկանեմ սուր ընդ մէջ, ընդ ակամբ հայիմ, ընդ առաջ ելանեմ, ընդ ետս թողանեմ, ընդ միտ ածեմ, ընդ սուր անցուցանեմ, խառնակիմ ընդ կին, մտանեմ ընդ լծով, մտանեմ ընդ հարկատրութեամբ, մտանեմ ընդ [illegible], մտանեմ ընդ հարկաւ։*

Զ—*զմտաւ ածեմ, բառնամ զգլուխ, բառնամ զկենդանութիւն, դարձուցանեմ զսիրտ, երանեմ զմեռեալսն, ըմպեմ զարիւն, համբառնամ*

զգլուխ, սփռեմ զասպատակ, հարկանեմ զբանակ, դնեմ զանձն, բանամ զբերան։

Օրինակներ՝

Դաշինս անուրէնութեան ուխտեալ առ իշխանն իւրեանց երդմամբ՝ չպարծուցանել զսուր ի պատեանս *մինչև ի մէջ աշխարհիս (20)։ Եւ յերկարաձգէր պատերազմն ի մէջ երկոցունց մինչև* ի գլուխ ելանել ա*մին յայնմիկ (216)։ Արդ եթէ ոչ* մացես ընդ լծով *ծառայութեան մերոյ՝ դիտասջիր, զի անապատ արարից զերկիրդ քո ի բնակչաց (38)։ Զերկիւղ Աստուծոյ* ընդ միտ ոչ ածէին *(166)։ Տագնապ հասուցանէր աշխարհիս՝ մինչև* ելանել զանձամբ *(20)։ Եւ նա առ վէշտին* ոչ բանայ զբերան *իւր (76)։*

Քննության ենթակա բնագրում հանդիպում են բայական ԴՄ-ներ, որոնց կառուցվածքային պլանում հանդես են գալիս մեկից ավելի նախդիրներ, ինչպես՝ դնել զոգի ի ձեռին, մատնել զանձն ի մահ, դարձուցանել զսուր ի պատեանս *և այլն։*

Համտ. Եւ Սահակ իբրև ետես զսպանումն եղբաւրն յաղագս յանձախ սիրոյն, զոր ունէր առ եղբայրն, մատնէր զանձն ի մահ *(131)։*

Ե) Եղանակավորող ԴՄ-ներ: *Գրաբարի եղանակավորող ԴՄ-ների ըստ մեծի մասին նախադասության ձևավորում ունեն, խոսքի մեջ հանդես են գալիս երանգավորող արժեքով։*

Ղ. Վարդապետի երկում հանդիպում են հետևյալ եղանակավորող ԴՄ-ները՝ իմեն Աստուած գիտէ, Քաւ լիցի:

Համտ. Ն. ամ բռնակալեցին, վասն որոյ պատճառանաց՝ իմէն Աստուած գիտէ, *այլ ոչ յաղագս նոցա ուղիղ հաւատոցն (98)։* Քաւ լիցի *թէ վախանակեսցուք զճշմարտութիւն Աստուծոյ ընդ ստութեան (163)։*

Անկասկած Ղևոնդ Վարդապետի երկի ԴՄ-ների քննությունը կարելի է շարունակել՝ կառուցվածքային նորանոր տիպեր հայտնաբերելու միտումով, սակայն ելնելով հոդվածի նպատակադրումից ու ծավալից՝ բավարարվենք այսքանով:

Այսպիսով՝ ձևաբանական-կառուցվածքային ի՞նչ բնորոշ գծեր են ի հայտ բերում Ղևոնդ Վարդապետի երկում գործածված ԴՄ-ները։

1. Լեզվի որևէ շրջանի ԴՄ-ների ուսումնասիրությունը որոշակի պատկերացում է տալիս լեզվական տվյալ զարգացման փուլի կայուն բառակապակցությունների գործառական դերի, նրանց կազմավորման ու կազմության եղանակների մասին:

2. Ղևոնդ Վարդապետի երկում գործածված ԴՄ-ների քննությունը մեր է հանում հայերենի կայուն բառակապակցությունների ձևաբանական-կառուցվածքային յուրահատկությունները ընդհանրապես, գրաբարինը՝ մասնավորապես.

ա) ԴՄ-ները վերաիմաստավորված կառույցներ են, որոնք պարտադիր ունեն դոմինանտ բաղադրիչ, որ հանդես է գալիս դարձվածայնորեն կապված նշանակությամբ:

բ) ԴՄ-ների դոմինանտ անդամի դերում գործառապես կենսունակ են մարմնի մասերի անվանումները։

գ) ԴՄ-ները հատկանշվում են խոսքիմասային (ձևաբանական) արժեքով:

դ) ԴՄ-ների դոմինանտ բաղադրիչի և ամբողջական կապակցության ձևաբանական արժեքները կարող են թե՛ համընկնել, թե՛ ոչ։

ե) Գրաբարի ԴՄ-ները Ղևոնդ Վարդապետի երկում ունեն գոյականական, ածականական, մակբայական, բայական և եղանակավորող արժեքներ։

զ) Գոյականական ԴՄ-ները հանդես են գալիս գոյ.+գոյ., ած+գոյ. *կառուցվածքային տիպերով:*

է) Ածականական ԴՄ-ները՝ ած.+գոյ. *և* գոյ.+գերբայ *տիպերով։*

ը) Մակբայական ԴՄ-ները՝ գոյ.+գոյ. *և* գոյ.+դերանուն *տիպերով։*

թ) Բայական ԴՄ-ներն ունեն հետևյալ կառուցվածքային տիպերը՝

1) անվանաբայական, որտեղ բայական անդամին հարադրվում է գոյականը՝ ուղղական և հայցական հոլովներով,

2) նախդրավոր, որտեղ բայական անդամը հարադրվում է կապ+կապի խնդիր կառույցների հետ. նման կառույցներում կենսունակ են ի, ընդ և զ նախդիրները։

ժ) Եղանակավորող ԴՄ-ներն ունեն նախադասության ձևավորում։

3. VIII դարի բառային կազմում առկա ԴՄ-ները մեծ մասամբ ժառանգություն են V դարի (նաև նախագրային) շրջանից, որոնք վարպետորեն գործածել է Ղևոնդ Վարդապետը՝ խոսքը գեղարվեստորեն ոճավորելու նպատակով։

СТРУКТУРНО-МОРФОЛОГИЧЕСКИЕ ТИПЫ ФРАЗЕОЛОГИЧЕСКИХ ЕДИНИЦ ДРЕВНЕАРМЯНСКОГО ЯЗЫКА В «ИСТОРИИ» ГЕВОНДА ВАРДАПЕТА

Л. Л. ХАЧАТРЯН

Резюме

Исследование фразеологии «Истории» Гевонда Вардапета дает определенное представление о семантике устойчивых словосочетаний древнеармянского языка VIII века.

В семантической структуре фразеологических единиц (ФЕ) налицо компоненты с фразеологически связанным значением, которые считаются доминантами данной конструкции.

В содержательном плане ФЕ в качестве доминирующих компонентов чаще всего выступают названия частей тела.

ФЕ в «Истории» Гевонда Вардапета имеют следующие модфологические значения: субстантивное, адъективное, адвербальное, глагольное и модальное, которые проявляются в разных структурных типах:

Субстантивные ФЕ—сущ.+сущ., прил.+сущ.,

Адъективные ФЕ—сущ.+прил., сущ.+глагол.

Адвербальные ФЕ—сущ.+сущ., сущ.+местоим.,

Глагольные ФЕ—сущ.+глагол. глагол+предложная конструкция.

Модальные ФЕ выступают в виде предложений.